ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-24/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հ.Մարտունի

16.01.2024թ.

11:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Օ. Հարությունյանը,անդամներ՝ Է.Գրիգորյանը, Թ. Դավթյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Ղազարյանը և քարտուղար Կ.Սիմոնյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-24/01» **ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:**

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ Ա/Ձ Ամալյա Գալոյան-ի հայտում արձանագրվել էր հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց Ա/Ձ Ամալյա Գալոյան -ի կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Ա/Ձ Ամալյա Գալոյանի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպության հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 «ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-24/01» ծածկագրով գնման հրավերի 1 չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչվել «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.8 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.9 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում (միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրով) ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: